Պարոն /Տիկին _____ *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան _____
01.07.2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Սերգեյ Աղինյան,
   - Սեդա Շահինյան,
   - Մերի Ղազարյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - հանձնաժողովի անդամ,
   - հանձնաժողովի անդամ,
   - հանձնաժողովի նախագահի խորհրդական:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝ Բրյուսել** (Բելգիայի Թագավորություն), 2025 թվականի հունիսի 23-25-ը՝ Ս. Աղինյան և Ս. Շահինյան, հունիսի 23-26-ը՝ Մ. Ղազարյան:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Եվրոպական միության հանուն Էներգետիկայի նախաձեռնության 2-րդ փուլի եզրափակիչ և էներգետիկայի կարգավորողների Եվրոպական խորհրդի տարեկան կոնֆերանսներին մասնակցություն:
6. **Քննարկված թեմաները (հարցերը)՝**

Եվրոպական միության հանուն Էներգետիկայի նախաձեռնության (EU4Energy Project) 2-րդ փուլի եզրափակիչ տարածաշրջանային համաժողովում քննարկվեցին EU4Energy

նախագծի երկրորդ փուլի իրականացումից ստացված նվաճումներն ու դասերը և ավելի մաքուր ու կայուն էներգետիկ ապագա ունենալուն միտված հետագա համագործակցության հնարավորությունները Արևելյան գործընկերության երկրների էներգետիկ ոլորտի հիմնական շահագրգիռ կողմերի հետ:

Էներգետիկայի կարգավորողների Եվրոպական խորհրդի տարեկան համաժողովը (CEER's Annual Conference) նվիրված էր էնեգետիկ ոլորտի առավել հրատապ հիմնախնդիրներին և մարտահրավերներին՝ էներգետիկայի ներկայիս աննախադեպ վերափոխման համատեքստում: Քննարկվող թեմաներն էին.

- ✓ էներգետիկ շուկայի զարգացման դինամիկան՝ հասցեագրված ԵՄ մրցունակության և սպառողների իրավունքների պաշտպանության հավասարակշռության ապահովմանը էներգակիրների գների անկայունության և համապարփակ (գլոբալ) միտումների պայմաններում,
- ✓ ենթակառուցվածքների հիմնախնդիրները և հնարավորությունները. ցանցային ներդրումները, ջրածնային ցանց (մագիստրալ), ոլորտային կապեր,
- ✓ էներգետիկայի ոլորտի կարգավորող մարմինների անկախության ապահովումը. հիմնական մարտահրավերներ և ազգային կարգավորողների (NRA) անկախության պահպանմանը նպատակաուղղված CEER-ի գործունեության (ջանքերի) լուսաբանումը:

7. Հանդիպումները, ելույթները՝

Եվրոպական միության հանուն Էներգետիկայի նախաձեռնության (EU4Energy Project) 2-րդ փուլի եզրափակիչ տարածաշրջանային համաժողովում CEER-ի նախագահությամբ վերլուծվեցին «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանման» նախագծի երկրորդ փուլի իրականացման ընթացքում ձեռք բերված նվաճումները և քաղված դասերը: Համաժողովի նպատակն էր խթանել երկխոսությունը հաջողված նախաձեռնությունների և ձեռքբերումների շուրջ, մասնավորապես մաքուր էներգետիկայի անցման փուլում առաջացող հիմնախնդիրների հաղթահարման հնարավորությունները և տարածաշրջանային համագործակցության խթանման վրա հնարավոր ազդեցությունը:

Համաժողովի բացման իր ելույթում CEER-ի նախագահ Աննեգրետ Գրոբելը ընդգվեց CEER-ի դերը կայուն էներգետիկային անցման գործընթացում կարգավորող մարմինների գործունեության միջավայրի բարելավման առումով՝ առանձնահատուկ մատնանշելով

կարգավորման ամուր շրջանակների կարևորությունը և կարգավորող մարմինների անկախության ապահովումը կայուն էներգետիկայի անցման գործընթացում արդյունավետ որոշումների կայացման համար: Եվրոպական հանձնաժողովի (DG ENEST և DG ENERGY) ներկայացուցիչները քննարկեցին ԵՄ-ի տեսլականը և գործողությունները Արևելյան գործընկերության երկրներում՝ ընդգծելով ԵՄ-ի հանձնառությունը նպատակաուղղված տարածաշրջանում կայուն զարգացման և ավելի սերտ կապերի ստեղծման խթանմանը: Իր հերթին Էներգետիկ համայնքի քարտուղարությունը (Energy Community Secretariat) ընդգծեց Էներգետիկ համայնքի երկրներին շարունակական աջակցություն ցուցաբերելու կարևորությունը՝ իրենց էներգետիկ բարեփոխումների ծրագրի իրականացման և մաքուր էներգետիկայի անցման հետագա առաջխաղացումների գործառույթում EU4Energy նախագծի 3-րդ փուլի շրջանակներում:

Դիտարկվող հարցադրումների պանելային քննարկման ժամանակ զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ՀԾԿՀ անդամ Սերգեյ Աղինյանը, ով ներկայացրեց, մասնավորապես, ՀՀ-ում արևային ֆոտովոլտային ինքնավար և արդյունաբերական կայանների ներկայիս ինտենսիվ զարգացումները և դրանով պայմանավորված էներգահամակարգի ռեժիմների կարգավորման գործընթացում առաջացած խնդիրները, ինչպես նաև այդ խնդիրների լուծմանն ուղղված հանձնաժողովի քայլերը:

EU4Energy նախագծի փորձագետ Արմին Բոհմը իր զեկուցմամբ ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում և Ադրբեջանի Հանրապետությունում արդյունավետ և կայուն ջեռուցման խնդիրների իր ուսումնասիրությունների արդյունքները և հետագա աշխատանքները: Համաժողովի ընթացքում Արմին Բոհմին մեր կողմից տրվեցին առաջադրվող հարցադրումների վերաբերյալ պարզաբանումներ (մասնավորապես, ԵՄ տարբեր ծրագրերի շրջանակներում շենքերի էներգաարդյունավետությանը ուղղված միջոցառումների, ինչպես նաև իրավական բազայի ներկայիս վիճակի և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն) և ՀՀ-ում տվյալ ոլորտին առնչվող կոնտակտային անձնավորությունների տվյալներ:

Համաժողովը ծառայեց ոչ միայն որպես նախագծի 2-րդ փուլի արդյունքների դիտարկման հարթակ, այլ նաև որպես հնարավորություն՝ վերհանելու ԵՄ կազմակերպությունների, քաղաքականության մշակողների, կարգավորող մարմինների ոլորտային կազմակերպությունների միջև ապագա համագործակցության ներուժը: EU4Energy նախաձեռնությունը ֆինանսավորվում է ԵՄ կողմից 8,5 մլն. ընդհանուր բյուջեով և համատեղ իրականացվում է

CEER-ի, Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) և Էներգետիկ համայնքի քարտուղարության (EnCS) կողմից:

Էներգետիկայի կարգավորողների Եվրոպական խորհրդի տարեկան համաժողովին մասնակցում էին էներգետիկայի ոլորտի կարգավորող մարմինները, քաղաքականության մշակողները և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ: Համաժողովը նվիրված էր սպառողների իրավունքների ընդլայնման խնդրում կարգավորողների դերակատարության, համակարգային ինտեգրման և շուկայի արդյունավետության հարցադրումներին:

Համաժողովի բացման իր խոսքում CEER-ի նախագահ Աննեգրետ Գրոբելը շնորհավորեց CEER-ի 25-ի կապակցությամբ և ընգծեց, որ կարգավորող մարմինները պետք է հանդիսանան էներգետիկ ոլորտում արդար և արդյունավետ անցումներին նպաստող գործոն՝ վարելով սպառողների շահերի պաշտպանությանը միտված քաղաքականություն: Նա նշեց, որ CEER-ի հիմնասյունն է անկախ էներգետիկ կարգավորողների համագործակցությունը՝ նպատակաուղղված ներքին էներգետիկ շուկայի զարգացման լավագույն փորձի փոխանակմանը: Ա. Գրոբելն առանձնահատուկ ընգծեց ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում ուժեղ և անկախ կարգավորողների առանձնահատուկ կարևորությունը, որոնք արդյունավետ կարգավորում պետք է իրականացնեն՝ հետևելով կարգավորման բանալիային սկզբունքներին և միաժամանակ ճկուն լինելով փոփոխվող իրավիճակին կարգավորող գործիքակազմը հարմարեցնելուն:

DG ENER-ի գլխավոր տնօրենի տեղակալ Մեխթիլդ Վյորսդյորֆերը ընդգծեց Եվրոպական հանձնաժողովի հանձնառությունը սպառողակենտրոն էներգետիկ շուկայի նկատմամբ:

Դանիայի Կլիմայի, Էներգետիկայի և կոմունալ ծառայությունների նախարարության մշտական քարտուղարի տեղակալ Քրիստիան Ստենբերգը կարևորեց Վերականգնվող էներգետիկայի հզորությունների ընդլայնման, էլեկտրաէներգետիկական ցանցի ընդլայնման ապահովման և սպառողներին գնային ցնցումներից պաշտպանելու հիմնախնդիրների կարևորությունը, ինչպես նաև էներգետիկ անվտանգության և մրցունակության բարձրացման հետագա բարեփոխումների հիմնախնդրում կարգավորող մարմինների, կառավարության և արդյունաբերական կազմակերպությունների միջև սերտ համագործացության կարևորությունը:

Համաժողովի ընթացքում տեղի ունեցած պանելային քննարկումներին և համապատասխան նյութերին կարելի է ծանոթանալ https://www.ceer.eu/event/ceer-annual-conference-2025/ հղմամբ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Այցի ընթացքում հանդիպում և քննարկումներ ունեցանք CEER-ի ներկայացուցիչների, EU4Energy նախագծի փորձագետների, մասնակից երկրների էներգետիկայի ոլորտը կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ, հնչեցին ոլորտային հարցեր և տրվեցին դրանց պատասխանները:

Գործուղվող _____ ***Ս. Աղինյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

01.07.2025թ.

Գործուղվող _____ ***Ս. Շահինյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

01.07.2025թ.

Գործուղվող _____ ***Մ. Ղազարյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

01.07.2025թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 428-ՀՆ, 03.06.2025թ**

3. ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ Սեդա Շահինյան,

հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աղինյան,

հանձնաժողովի նախագահի խորհրդական՝ Մերի Ղազարյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.Բրուսել **/Բելգիայի Թագավորություն /**

5. Գործուղման ժամկետները **23.06.2025-25.06.2025 թթ և 23.06.2025-26.06.2025թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ,** օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սեդա Շահինյան	Սերգեյ Աղինյան	Մերի Ղազարյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիաթռռության տեսակը (էկոնոմ դաս)				-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ) **60%**				-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	**126**	**126**	**126**	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	**55,051**	**55,051**	**55,051**	
	Օրերի քանակը	**3**	**3**	**4**	
	Ընդամենը (դրամ)	**165,152**	**165,152**	**220,203**	**550.507**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**165,152**	**165,152**	**220,203**	**550.507**

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **27. 06.2025թ.**